



05/15731-17
110512/13168-17

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 1408 ա/վ

« 17 » 11 2017 թ.

ք.Երևան

**ՎԱՐԴԱՆ ԴԵՐԵՆԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և 16-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 224-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 3-ի N 259-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 16-րդ կետի 10-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2016 թվականի մայիսի 6-ի N 487-Ն հրամանով հաստատված հավելվածի 1-ի 100-րդ կետը, թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի վերաբերյալ մրցութային հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 17-ի եզրակացությունը և Վարդան Գևորգյանի դիմումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Վարդան Դերենիկի Գևորգյանին նշանակել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 (հինգ) տարի ժամկետով:

2. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Դ. ՏՈՆՈՅԱՆ